

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 3

06.04.2022թ. կնքված N ՀՀՔԿ-ՄԱԾՁԲ-22/3Հ գնման պայմանագրի

ք. Երևան

05.10.2022թ.

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Ա. Մկրտչյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Արմատրոյ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կատարող), ի դեմս տնօրեն՝ Ա. Առաքելյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (երկուսը միասին՝ այսուհետ՝ Կողմեր), հիմք ընդունելով ՀՀ կառավարության 01.09.2022 թվականի N 1381-Ն որոշումը և ՀՀ Լոռու մարզի «Վարդաբլուրի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի նոր մարզադահլիճի կառուցման, ՀՀ Լոռու մարզի «Վանաձորի Ղևոնդ Ալիշանի անվան N 27 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի մարզադահլիճի վերակառուցման, ՀՀ Լոռու մարզի «Ալավերդու թիվ 12 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի մարզադահլիճի վերակառուցման, «Երևանի Ա. Երզնկյանի անվան հ. 118 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի նոր մարզադահլիճի կառուցման, «Երևանի Սիլվա կապուտիկյանի անվան թիվ 145 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի նոր մարզադահլիճի կառուցման, «Երևանի Վ. Թեքեյանի անվան թիվ 92 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի մարզադահլիճի վերակառուցման, «Երևանի Մ. Սարյանի անվան հ. 86 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի մարզադահլիճի վերակառուցման, «Երևանի հ. 37 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի մարզադահլիճի վերակառուցման, «Երևանի հ. 136 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի մարզադահլիճի վերակառուցման, ՀՀ Գեղարքունիքի մարզի «Վ. Գետաշեն թիվ 2 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի մարզադահլիճի վերակառուցման, ՀՀ Գեղարքունիքի մարզի «Ակունք գյուղի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի մարզադահլիճի վերակառուցման, ՀՀ Վայոց Ձորի մարզի «Շատինի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի մարզադահլիճի վերակառուցման, ՀՀ Արմավիրի մարզի «Արագածի Մ. Մեխակյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի նոր մարզադահլիճի կառուցման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայությունների կատարման համար Կողմերի միջև 06.04.2022թ. կնքված N ՀՀՔԿ-ՄԱԾՁԲ-22/3Հ գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 և 7.13 կետերը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը որոշեցին՝ 2022 թվականի վճարման (ֆինանսական պարտավորությունների կատարման) ժամանակացույցը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն Համաձայնագրի հավելվածի:

2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում Կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը կազմված է 1 (մեկ) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Համաձայնագրի հավելվածը բաղկացած է 3 (երեք) էջից և համարվում է Համաձայնագրի անբաժանելի մասը: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝

ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ,
կառավարական տուն 3

ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011039998, 900011034643,
900011034668, 900011039931, 900011039949,
900011034585, 900011034601, 900011034619,
900011034627, 900011034684,
900011034676, 900011034775, 900011039956
Հ/Հ 02565827


Գլխավոր քարտուղար


Ա. Մկրտչյան
(ստորագրություն)


ԿԱՏԱՐՈՂ՝

«Արմատրոյ» ՍՊԸ
ՀՀ Սյունիքի մարզ, ք. Սիսիան,
Ա. Մանուկյան 15
«ԱԿԲԱ ԲԱԲԿ» ԲԲԸ
Հ/Հ 2203001212940000
Հ/Հ 09809552

Տնօրեն՝


Ա. Առաքելյան
(ստորագրություն)
